ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
№ ՇՄՆ-ԳՀ-ԾՁԲ-20/04

ք.Երևան «29» «11» 2019թ.

Շրջակա միջավայրի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղարի ժ/պ Վ.Ջիլավյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՊԻ ԿԱ ԷՖ Աուդիտ Սերվիս» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Գ.Դավթյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն Պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է «Ներքին աուդիտի ծառայությունների» մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն Պայմանագրի անբաժանելի մասը կազմող Հավելված №1-ով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2. Ծառայությունը մատուցվում է Պայմանագրի Հավելված №1-ով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1. Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2. Եթե մատուցվել է Պայմանագրի Հավելված №1-ում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը Պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու Պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու Պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. Միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է Պայմանագիրը: Կատարողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում Պայմանագրի Հավելված №1-ով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2. Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1. Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2. Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3. Կատարողն իրավունք ունի՝

2.3.1. Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից Պայմանագրի 7.13 կետով նախատեսված ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կնքված համաձայնագրով նախատեսվող վճարման ժամկետի խախտման դեպքում նաև Պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4. Կատարողը պարտավոր է՝

2.4.1. Պայմանագրի Հավելված №1-ով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2. Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3. Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1. Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Պայմանագրի կատարումն ընդունելու նպատակով յուրաքանչյուր հանձնման-ընդունման արձանագրության հետ մեկտեղ Կատարողը ներկայացնում է հաշվետվություն հաշվետու ժամանակահատվածում մատուցված ծառայության մասին՝ նշելով ծառայություն մատուցողի անունը, ծառայության բնույթը, բովանդակությունը և դրա փաստաթղթավորված արդյունքը, ինչպես նաև իր կողմից հաստատած գրավոր հավաստում, որ ծառայությունը մատուցվել է գնման ընթացակարգին մասնակցելու շրջանակում հրավերով նախատեսված «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշի գնահատման նպատակով ներկայացված մասնագետների կողմից՝ կցելով նաև վերջիններիս կողմից հաստատված ինքնակենսագրությունները:

Մինչև Պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված №2.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (Հավելված №2): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2. Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն Պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps *համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման* արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3. Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում Պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և Պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4. Եթե Պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և Պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **11 700 000 (տասնմեկ միլիոն յոթ հարյուր հազար)** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2. Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ Պայմանագրի 7.13 կետով նախատեսված ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կնքված համաձայնագրով նախատեսվող վճարման ժամանակացույցով:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ Պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2. Պայմանագրի Հավելված №1-ում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[1]: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը Պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

[1] Տուգանքը հաշվարկվում է Պայմանագրի 7.13 կետով նախատեսված ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կնքված համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:

5.3. Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4. Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5. Պատվիրատուի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6. Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7. Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց Պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով և Պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում Պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2. Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ Պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3. Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով Պայմանագիրը լուծվել է:

7.4. Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5. Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է Պայմանագրում, իսկ եթե Պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ Պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ Պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6. Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև Պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան Պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրա ցուցային օրով, բայց ոչ ավել քան Պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7. Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են Պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8. Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, Պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9. Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, Պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10. Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11. Պայմանագիրը կազմված է 5 (հինգ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Պայմանագրի Հավելվածները №№ 1; 2 և 2.1 հանդիսանում են Պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ:

7.12. Պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13. Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով Պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում Պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Շրջակա միջավայրի նախարարություն	**«ՊԻ ԿԱ ԷՖ Աուդիտ Սերվիս» ՍՊԸ**
ք.Երևան, Կառավարական 3-րդ շենք	ք.Երևան, Վարդանանց 18/1, 3-րդ հարկ, գրասենյակ 54
ՖՄ գործառնական վարչություն	«Ամերիաբանկ» ՓԲԸ
ՀՎՀՀ 900011018646	ՀՀ 1570002914170100
ՀԱՎՀՀ 02507198	ՀՎՀՀ 00419022
Շրջակա միջավայրի նախարարության գլխավոր քարտուղարի ժ/պ	«ՊԻ ԿԱ ԷՖ Աուդիտ Սերվիս» ՍՊԸ-ի տնօրեն
Կ.Ջիլավյան	***Գ.Դավթյան***
_____	_____
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	**Կ.Տ.**

Հավելված №1
«29» «11» 2019թ. կնքված
«ՇՄՆ-ԳՀ-ԾՁԲ-20/04» ծածկագրով պայմանագրի

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Շրջակա միջավայրի նախարարության	**«ՊԻ ԿԱ ԷՖ Աուդիտ Սերվիս» ՍՊԸ-ի**
գլխավոր քարտուղար՝ Մ.պ.	տնօրեն
Վ.Ջիլավյան	***Գ.Դավթյան***
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	**Կ.Տ.**

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գին	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցե	ժամկետը*
1	79211180/501	Շրջակա միջավայրի նախարարության ներքին աուդիտի ծառայություն**	դրամ	**11 700 000**	1	ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարության 3-րդ շենք, ինչպես նաև պայմանագրի գործողության ընթացքում Շրջակա միջավայրի նախարարությանն ամրացված վարչական շենքերի փոփոխության դեպքում՝ փոփոխված վայրերում:	Ծառայության մատուցումն իրականացվում է պայմանագրի հիման վրա կնքվելիք համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2021 թվականի մարտի 31-ը:

**ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:*

** Շրջակա միջավայրի նախարարության ներքին աուդիտի ծառայություն

1. Ներքին աուդիտի ծառայության շրջանակը՝

Ներքին աուդիտի ծառայությունների մատուցման նպատակով հրավիրված անձը (այսուհետ՝ Կատարող) պետք է գնահատի ՀՀ հանրային հատվածի կազմակերպության (այսուհետ՝ կազմակերպություն) ներքին աուդիտի միջավայրը՝ ֆինանսական կառավարման և հսկողության հետ կապված գործառույթները՝ իրականացնելով «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքով և ՀՀ ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի N143-Ն հրամանով (այսուհետ՝ N143-Ն հրաման) սահմանված ներքին աուդիտի տեսակները, որը ներառում է՝

1) հավաստիացման տրամադրում (համապատասխանության աուդիտ, կատարողականի աուդիտ, համապատասխանության և կատարողականի աուդիտի տեսակների համակցություն),
2) խորհրդատվություն:

Կատարողը սույն տեխնիկական բնութագրի 3-րդ կետի 5-րդ ենթակետում թվարկված իրավական ակտերին համապատասխան առաջարկների ներկայացման միջոցով պետք է օժանդակի ղեկավարությանը ձեռնարկել միջոցառումներ՝ կազմակերպության նպատակներին հասնելու և դրանում հնարավոր ռիսկերը կառավարելու համար:

Նախկինում կատարած աուդիտորական աշխատանքների արդյունքները պետք է ընդունվեն ի գիտություն և հաշվի առնվեն հետագա աշխատանքներում:

2. Կատարողին և վերջինիս կողմից մատուցվող ներքին աուդիտի ծառայության նկատմամբ ներկայացվող ընդհանուր պահանջներ՝

2.1. Ներքին աուդիտի անկախությունը՝

ա) Կատարողը պետք է հաշվետու լինի կազմակերպության ղեկավարին (այսուհետ՝ ղեկավար) և ներքին աուդիտի կոմիտեին.
բ) Կատարողը պետք է կատարի ներքին աուդիտի կոմիտեի քարտուղարի պարտականությունները.
գ) Կատարողը չի կարող իրականացնել կազմակերպության կառավարման որևէ գործառույթ, բացի ներքին աուդիտի գործունեության կառավարման գործառույթներից.
դ) Կատարողը պետք է իրականացնի կազմակերպության ներքին աուդիտի միջավայրի ուսումնասիրություն և գնահատում:

2.2. Ձեռքբերվող ծառայության նկարագիրը՝

1) Կատարողը պարտավոր է Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից ձեռնարկի ներքին աուդիտի մասին օրենսդրությամբ սահմանված բոլոր այն գործողությունների կատարումը այնպիսի ժամկետներում, որպեսզի՝ 2019 թվականն ընգրկող ժամանակահատվածից սկսած մինչև պայմանագրի գործողության ժամկետի ավարտը ապահովի սույն տեխնիկական բնութագրով և ներքին աուդիտի մասին օրենսդրությամբ սահմանված ներքին աուդիտի ծառայությունների մատուցումը.

2) Սույն բաժնի 1-ին կետով սահմանված պարտականության կատարման նպատակով Կատարողը պարտավոր է.

ա) կազմել ներքին աուդիտի որակի երաշխավորման և բարելավման ծրագիր, ապահովել դրա կատարումը.

բ) կազմել և ղեկավարի հաստատմանը ներկայացնել ներքին աուդիտի կանոնակարգը.

գ) կազմել ռազմավարական և տարեկան ծրագրերը՝ կազմակերպության ռիսկերի գնահատման, ինչպես նաև ղեկավարի կողմից մատնանշված խնդիրների հիման վրա.

դ) իրականացնել արդյունավետ ներքին աուդիտ «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքով և N143-Ն հրամանով սահմանված տեսակներներով, ինչը ներառում է՝ հավաստիացման տրամադրում (համապատասխանության աուդիտ, կատարողականի աուդիտ, համապատասխանության և կատարողականի աուդիտի տեսակների համակցություն) և խորհրդատվություն, չսահմանափակվելով հետևյալ գործողություններով՝

- կազմակերպության ղեկավարության կողմից ռիսկերի բացահայտում, գնահատում և կառավարում,
- Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և կազմակերպության գործունեությանն առնչվող այլ պայմաններին (պայմանագրերին, գերատեսչական նորմատիվ ակտերին և այլնին) համապատասխանություն,
- տնտեսող, արդյունավետ և օգտավետ գործառույթներ,
- տեղեկությունների վստահելիություն և ամբողջականություն,
- կորուստներից, չարաշահումներից և վնասներից ակտիվների ու ռեսուրսների պահպանման հուսալիություն,
- առաջադրանքների կատարում և նպատակների իրագործում:

ե) տրամադրել.

- հավաստիացում առ այն, որ կազմակերպությունում առկա կառավարչական գործընթացները համապատասխանում են/չեն համապատասխանում/մասամբ են համապատասխանում նշանակալի ռիսկերի բացահայտման և դիտարկման նպատակին.
- հաստատում առ այն, որ ներդրված ներքին հսկողական համակարգերը գործում են/չեն գործում արդյունավետ կերպով.
- հավաստիացում առ այն, որ ռիսկերի կառավարման վերաբերյալ հաշվետվողականության գործընթացները հուսալի են/հուսալի չեն.
- հաստատում առ այն, որ ղեկավարը կազմակերպության այլ պաշտոնատար անձանցից ստանում է/չի ստանում/մասամբ է ստանում պատշաճ որակի և հուսալի տեղեկատվություն.
- առաջարկություններ՝ ուղղված հսկողական համակարգերի և ռիսկերի կառավարման ընթացակարգերի բարելավմանը և հսկողական համակարգերում բացահայտված թերությունների շտկմանը,

զ) կազմել և ղեկավարին ու ներքին աուդիտի կոմիտեին ներկայացնել ներքին աուդիտի մասին օրենսդրությամբ նախատեսված հաշվետվությունները.

- իրականացված աուդիտորական առաջադրանքների արդյունքների վերաբերյալ պարբերական հաշվետվություններ.
- ներքին աուդիտի գործունեության արդյունքների վերաբերյալ տարեկան հաշվետվություն.
- տարեկան առնվազն մեկ անգամ ներքին աուդիտի որակի երաշխավորման և բարելավման ծրագրի կատարման վերաբերյալ հաշվետվություն, ներառյալ ներքին գնահատման արդյունքները, միջոցառումների անհրաժեշտ ծրագրերը և դրանց իրականացման արդյունքները:

է) իրականացնել վերստուգման գործընթաց՝ աուդիտի ենթարկվող միավորի ղեկավարության կողմից իրականացված՝ աուդիտի արդյունքում բացահայտված թերությունների շտկման գործողությունների համապատասխանությունը, արդյունավետությունը և ժամանակին լինելը գնահատելու նպատակով: Կատարողը պետք է հատուկ ուշադրություն դարձնի այն առաջարկություններին, որոնց մասով ղեկավարությունն ստանձնել է մնացորդային ռիսկ, և պատշաճ կերպով փաստաթղթավորի այդ դեպքերը.

ը) կազմակերպել աշխատանքային փաստաթղթերի պատշաճ փաստաթղթավորում և պահպանում:

3) Ներքին աուդիտի համագործակցությունը այլ ներքին և արտաքին հավաստիացումներ տրամադրողների հետ.

ա) Կատարողը պետք է համագործակցի ներքին հավաստիացումներ տրամադրողների հետ՝ անհրաժեշտ տեղեկատվություն ստանալու և գործողությունների կրկնությունը բացառելու նպատակով.

բ) ղեկավարի հանձնարարությամբ Կատարողը պետք է համագործակցի հանրային հատվածի կազմակերպություններում օրենքով սահմանված կարգով ստուգում իրականացնող պետական կառավարման համակարգի մարմինների և ՀՀ հաշվեքննիչ պալատի հետ՝ նրանց աջակցելու և համապատասխան տեղեկատվություն տրամադրելու նպատակով:

Համապատասխանության աուդիտը կամ իրավական աուդիտը նախատեսված է օրենքներին, այլ իրավական ակտերին, ինչպես նաև կազմակերպության գործունեությանն առնչվող այլ պայմաններին (պայմանագրերին, գերատեսչական նորմատիվ ակտերին և այլնին) կազմակերպության գործունեության համապատասխանությունն ուսումնասիրելու համար: Այս դեպքում, շեշտը դրվում է ոչ միայն ներքին հսկողության տարբեր գործընթացների արդյունավետության գնահատման, այլ նաև օրենքներին, այլ իրավական ակտերին և այլ պայմաններին կազմակերպության գործունեության համապատասխանության վերաբերյալ ղեկավարությանը հավաստիացման տրամադրման վրա:

Կատարողականի աուդիտը նախատեսված է գործընթացները գնահատել տնտեսելու, օգտավետության և արդյունավետության տեսանկյունից: Կատարողականի աուդիտն ուսումնասիրում է ծառայության մատուցումը այս երեք հատկանիշների տեսանկյունից: Այն կարող է նաև ընդգրկել ծառայությունների համեմատումը համանման կազմակերպությունների կողմից մատուցված ծառայությունների հետ՝ որակի և ծախսերի տեսանկյունից:

Համապատասխանության և կատարողականի աուդիտի տեսակների համակցության տարատեսակներից են՝ համակարգի գնահատման, ֆինանսական, տեղեկատվական տեխնոլոգիաների և այլ աուդիտները:

2.3. Լիազոր մարմնին տրամադրվող տեղեկատվություն.

Կատարողը ֆինանսների նախարարությանը՝ որպես «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքով սահմանված լիազոր մարմին (այսուհետ՝ Լիազոր մարմին), պետք է տրամադրի ներքին աուդիտի մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հետևյալ տեղեկատվությունը.

ա) «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետով սահմանված Լիազոր մարմնի կողմից հրապարակված ցանկում ընդգրկվելու համար ներկայացված տեղեկություններում կամ փաստաթղթերում, այդ թվում՝ Կատարողի կամ դրա աշխատող համարվող ներքին աուդիտորների մասին փաստաթղթերում փոփոխություններ կատարելու դեպքում այդ փոփոխությունների մասին տեղեկատվություն՝ դրանք ուժի մեջ մտնելուց հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում.

բ) ներքին աուդիտորներին վերապատրաստելու անհրաժեշտության և վերապատրաստման ծրագրի ուղղվածության մասին առաջարկություններ.

գ) ռազմավարական ծրագիրը, ներառյալ դրանում կատարված փոփոխությունները ներքին աուդիտի մասին օրենսդրությամբ սահմանված կարգով վավերացվելու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում՝ ի գիտություն.

դ) հաջորդող տարվա տարեկան ծրագիրը ՝ մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 1-ը.

ե) հաշվետվություն՝ ՀՀ ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի N 143-Ն հրամանի 9-րդ հավելվածում ներկայացված 2-րդ ձևով՝ ներքին աուդիտի կանոնակարգի հաստատումից կամ փոփոխության ուժի մեջ մտնելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում.

զ) ներքին աուդիտի տարեկան ամփոփ հաշվետվություն՝ մինչև հաջորդ տարվա մարտի 1-ը.

է) կազմակերպության կողմից հաստատված ներքին գնահատման ստուգաթերթերը և հարցաշարերը ու դրանցում կատարված փոփոխությունները՝ հաստատումից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում.

ը) ներքին գնահատման արդյունքները, միջոցառումների անհրաժեշտ ծրագրերը և դրանց իրականացման արդյունքները՝ տարեկան առնվազն մեկ անգամ, ցանկալի է տարեկան ամփոփ հաշվետվության հետ մեկտեղ:

3. Այլ տեղեկություններ՝

1)ՀՀ հանրային հատվածի կազմակերպության գործառույթները սահմանված են «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքով և այլ իրավական ակտերով,

2) ՀՀ հանրային հատվածի կազմակերպության համակարգում գործում են թվով 16 առանձնացված և կառուցվածքային ստորաբաժանումներ,

3) Ներքին աուդիտը պետք է իրականացվի համակարգում գործող 6 կազմակերպություններում, որի ցանկը կտրամադրվի պատվիրատուի կողմից,

4) Կատարողին կտրամադրվեն կազմակերպությյան ներքին աուդիտի ստորաբաժանման կողմից մշակված և հաստատված ներքին աուդիտի օրենսդրությունից բխող ներքին իրավական ակտերի օրինակները.

5) Ներքին աուդիտի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ, այդ թվում՝ հետևյալ իրավական ակտերով.

I. «Ներքին աուդիտի մասին» օրենք.
II. ՀՀ կառավարության 11.08.2011թ. N 1233-Ն որոշում.
III. ՀՀ ֆինանսների նախարարի 08.12.2011թ. N 974-Ն հրաման.
IV. ՀՀ ֆինանսների նախարարի 17.02.2012թ. N 143-Ն հրաման.
V. ՀՀ ֆինանսների նախարարի 23.02.2012թ. N 165-Ն հրաման.
VI. ՀՀ կառավարության 31.05.2012թ. N 732-Ն որոշում.
VII. ՀՀ ֆինանսների նախարարի 30.11.2012թ. N 1050-Ն հրաման.
VIII. ՀՀ ֆինանսների նախարարի 12.12.2012թ. N 1096-Ն հրաման.
IX. ՀՀ կառավարության 08.08.2013թ. N 896-Ն որոշում.
X. ՀՀ կառավարության 13.02.2014թ. N 176-Ն որոշում.
XI. ՀՀ ֆինանսների նախարարի 21.08.2014թ. N 541-Ն հրաման:

Հավելված №2
«29» «11» 2019թ. կնքված
«ՇՄՆ-ԳՀ-ԾՁԲ-20/04» ծածկագրով պայմանագրի

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Շրջակա միջավայրի նախարարություն	**«ՊԻ ԿԱ ԷՖ Աուդիտ Սերվիս» ՍՊԸ**
ք.Երևան, Կառավարական 3-րդ շենք	ք.Երևան, Վարդանանց 18/1, 3-րդ հարկ, գրասենյակ 54
ՖՆ գործառնական վարչություն	«Ամերիաբանկ» ՓԲԸ
ՀՀ 900011018646	ՀՀ 11500844540100
ՀՎՀՀ 02507198	ՀՎՀՀ 00419022

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«_____» «_____» 2020թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ ***Պետության կարիքների համար ծառայության մատուցման պետական գնման Պայմանագիր***
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «29» «11» 2019 թ.
Պայմանագրի համարը՝ ՇՄՆ-ԳՀ-ԾՁԲ-20/04
Պատվիրատուն և Կատարողը՝ հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «___» «_____» 2020 թ. դուրս գրված № _____ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

№	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ Պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ Պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված №2.1
«29» «11» 2019թ. կնքված
«ՇՄՆ-ԳՀ-ԾՁԲ-20/04» ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ №

Պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ շրջակա միջավայրի նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) և «ՊԻ ԿԱ ԷՖ Աուդիտ Սերվիս» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կատարող) միջև «29» «11» 2019 թվականին կնքված № ՇՄՆ-ԳՀ-ԾՁԲ-20/04 գնման Պայմանագրի շրջանակներում Կատարողը «_____» «_____» 2020 թվականին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց	**Ընդունեց** հայտը նախագծած ներկայացուցիչ՝
_____ ազգանուն, անուն	_____ ազգանուն, անուն
_____ ստորագրություն	_____ ստորագրություն

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ №1

«29» նոյեմբերի 2019թ. N ՇՄՆ-ԳՀ-ԾՁԲ-20/04 պայմանագրի

ք.Երևան «24» «03» 2020թ.

Շրջակա միջավայրի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղարի ժ/պ Վ.Ջիլավյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Պատվիրատու», մի կողմից, և «ՊԻ ԿԱ ԷՖ Աուդիտ Սերվիս» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Գ.Դավթյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Կատարող», մյուս կողմից, երկուսը միասին՝ այսուհետ՝ «Կողմեր», ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով կողմերի միջև 2019 թվականի նոյեմբերի 29-ին կնքված «ՇՄՆ-ԳՀ-ԾՁԲ-20/04» ծածկագրով պայմանագրի 7.5 և 7.13 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

1.1. Կողմերը որոշեցին 2019 թվականի նոյեմբերի 29-ին կնքված «ՇՄՆ-ԳՀ-ԾՁԲ-20/04» ծածկագրով պայմանագիրը՝ 2020 թվականի ծառայությունների մատուցման համար լրացնել վճարման ժամանակացույց հավելվածով՝ համաձայն հավելվածի:

1.2. Պայմանագրով նախատեսված 2021 թվականի ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով:

2. Այլ պայմաններ

2.1. Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, հայերեն լեզվով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Համաձայնագրի Հավելվածը համարվում է համաձայնագրի անբաժանելի մասը:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Շրջակա միջավայրի նախարարություն	**«ՊԻ ԿԱ ԷՖ Աուդիտ Սերվիս» ՍՊԸ**
ք.Երևան, Կառավարական 3-րդ շենք	ք.Երևան, Վարդանանց 18/1, 3-րդ հարկ, գրասենյակ 54
ՖՆ գործառնական վարչություն	«Ամերիաբանկ» ՓԲԸ
ՀՀ 900011018646	ՀՀ 1570002914170100
ՀՎՀՀ 02507198	ՀՎՀՀ 00419022
Շրջակա միջավայրի նախարարության գլխավոր քարտուղարի ժ/պ	«ՊԻ ԿԱ ԷՖ Աուդիտ Սերվիս» ՍՊԸ-ի տնօրեն
Վ.Ջիլավյան	***Գ.Դավթյան***
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված
«24» «03» 2020թ. կնքված
համաձայնագիր №1
№ «ՇՄՆ-ԳՀ-ԾՁԲ-20/04» պայմանագրի

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Շրջակա միջավայրի նախարարության
գլխավոր քարտուղարի ժ/պ
Վ.Ջիլավյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«ՊԻ ԿԱ ԷՖ Աուդիտ Սերվիս» ՍՊԸ-ի
տնօրեն
Գ.Դավթյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

(<< դրամ)

Ծառայության															
			դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020 թվականին՝ այդ թվում (ըստ ամիսների աճողական կարգով)												
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	79211180/501	Շրջակա միջավայրի նախարարության ներքին աուդիտի ծառայություն (2020թ.)	-	-	-	2 925 000	2 925 000	2 925 000	5 850 000	5 850 000	5 850 000	8 775 000	8 775 000	8 775 000	**8 775 000**

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Շրջակա միջավայրի նախարարությունը ստորև ներկայացնում է իր կարիքների համար «Ներքին աուդիտի ծառայությունների» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՇՄՆ-ԳՀ-ԾՁԲ-20/04» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2019 թվականի նոյեմբերի 29-ին կնքված «ՇՄՆ-ԳՀ-ԾՁԲ-20/04» ծածկագրով պայմանագրում 2020 թվականի մարտի 24-ին կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության պատճառ՝	Գնումը կատարվել է ֆինանսական միջոցներ նախատեսվելու պայմանով,
Փոփոխության նկարագրություն՝	Պայմանագիրը լրացվել է վճարման ժամանակացույց հավելվածով,
Փոփոխության հիմնավորում՝	«Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիմքով կնքված պայմանագիր: Պայմանագրի 7.5 և 7.13 կետեր:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ **Լիլիթ Զոհրաբյանին**:

Հեռախոս՝ **(011) 818-514:**

Էլ. փոստ՝ **gnumner.mnp@yandex.ru:**

Պատվիրատու՝ **Շրջակա միջավայրի նախարարություն:**

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 2

«29» նոյեմբերի 2019թ. N ՇՄՆ-ԳՀ-ԾՁԲ-20/04 պայմանագրի

ք.Երևան «23» «02» 2021թ.

Շրջակա միջավայրի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Գ.Գույլանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Պատվիրատու», մի կողմից, և «ՊԻ ԿԱ ԷՖ Աուդիտ Սերվիս» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Գ.Դավթյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Կատարող», մյուս կողմից, երկուսը միասին՝ այսուհետ՝ «Կողմեր», ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով կողմերի միջև 2019 թվականի նոյեմբերի 29-ին կնքված «ՇՄՆ-ԳՀ-ԾՁԲ-20/04» ծածկագրով պայմանագրի 7.5 և 7.13 կետերը, ինչպես նաև 2020 թվականի մարտի 24-ին կնքված «ՇՄՆ-ԳՀ-ԾՁԲ-20/04» ծածկագրով պայմանագրի №1 համաձայնագրի 1.2 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

1.1. Կողմերը որոշեցին 2019 թվականի նոյեմբերի 29-ին կնքված «ՇՄՆ-ԳՀ-ԾՁԲ-20/04» ծածկագրով պայմանագիրը՝ 2021 թվականի ծառայությունների մատուցման համար լրացնել վճարման ժամանակացույց հավելվածով՝ համաձայն հավելվածի:

2. Այլ պայմաններ

2.1. Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

2.2. Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, հայերեն լեզվով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Համաձայնագրի Հավելվածը համարվում է համաձայնագրի անբաժանելի մասը:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Շրջակա միջավայրի նախարարություն	**«ՊԻ ԿԱ ԷՖ Աուդիտ Սերվիս» ՍՊԸ**
ք.Երևան, Կառավարական 3-րդ շենք	ք.Երևան, Վարդանանց 18/1, 3-րդ հարկ, գրասենյակ 54
ՖՆ գործառնական վարչություն	«Ամերիաբանկ» ՓԲԸ
ՀՀ 900011018646	ՀՀ 1570002914170100
ՀՎՀՀ 02507198	ՀՎՀՀ 00419022
Շրջակա միջավայրի նախարարության գլխավոր քարտուղար	«ՊԻ ԿԱ ԷՖ Աուդիտ Սերվիս» ՍՊԸ-ի տնօրեն
Գ.Գույլան	***Գ.Դավթյան***
----------	----------
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	**Կ.Տ.**

Հավելված
«23» «02» 2021թ. կնքված
համաձայնագիր №2
№ «ՇՄՆ-ԳՀ-ԾՁԲ-20/04» պայմանագրի

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Շրջակա միջավայրի նախարարության
գլխավոր քարտուղար
Գ. Գույան

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«ՊԻ ԿԱ ԷՖ Աուդիտ Սերվիս» ՍՊԸ-ի
տնօրեն
Գ. Դավթյան

(ստորագրություն)
Կ.Տ.

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

(<< դրամ)

Ծառայության														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	**գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)**	**անվանումը**	**դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021 թվականին՝ այդ թվում (ըստ ամիսների աճողական կարգով)**											
			հունվար	**փետրվար**	**մարտ**	**ապրիլ**	**մայիս**	**հունիս**	**հուլիս**	**օգոստոս**	**սեպտեմբեր**	**հոկտեմբեր**	**նոյեմբեր**	**դեկտեմբեր**	**Ընդամենը**
1	79211180/3	Շրջակա միջավայրի նախարարության ներքին աուդիտի ծառայություն (2021թ.)	-	2 925 000	2 925 000	2 925 000	2 925 000	2 925 000	2 925 000	2 925 000	2 925 000	2 925 000	2 925 000	2 925 000	**2 925 000**

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Շրջակա միջավայրի նախարարությունը ստորև ներկայացնում է իր կարիքների համար «Ներքին աուդիտի ծառայությունների» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՇՄՆ-ԳՀ-ԾՁԲ-20/04» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2019 թվականի նոյեմբերի 29-ին կնքված «ՇՄՆ-ԳՀ-ԾՁԲ-20/04» ծածկագրով պայմանագրում 2021 թվականի փետրվարի 23-ին կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության պատճառ՝	Գնումը կատարվել է 2021 թվականի ծառայությունների մատուցման ֆինանսական միջոցներ նախատեսվելու պայմանով,
Փոփոխության նկարագրություն՝	Պայմանագիրը լրացվել է 2021 թվականի ծառայությունների մատուցման վճարման ժամանակացույց հավելվածով,
Փոփոխության հիմնավորում՝	«Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիմքով կնքված պայմանագիր: Պայմանագրի 7.5 և 7.13 կետեր: 2020 թվականի մարտի 24-ին կնքված «ՇՄՆ-ԳՀ-ԾՁԲ-20/04» ծածկագրով պայմանագրի №1 համաձայնագրի 1.2 կետը:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ **Լիլիթ Զոհրաբյանին**:

Հեռախոս՝ **(011) 818-529:**

Էլ. փոստ՝ **gnumner.mnp@yandex.ru:**

Պատվիրատու՝ **Շրջակա միջավայրի նախարարություն:**